

## ՇՁի պատյան

Ներկայումս լայն կիրառություն են ստացել շՁերի հուշանվերային պատյանները, որոնք առաջարկվում են ինչպես տարբեր հուշանվերներ արտադրողների տեսականիում, այնպես էլ ավտոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպությունների կողմից՝ որպես հետաքրքիր, հարմարավետ և գեղագիտական հավելում իրենց արտադրանքին: Շուկայում առկա են տարբեր նյութերից՝ կտորից, փայտից, մետաղալարից, մետաղից պատրաստված շՁի բազմաթիվ պատյաններ, որոնք ունեն դեկորատիվ և գործնական՝ պաշտպանիչ նշանակություն: Առաջարկը վերաբերում է շՁերի փաթեթավորման միջոցների գեղարվեստա-կոնստրուկտորական նոր լուծմանը, պատրաստվում է արհեստագործական եղանակով և կարող է կիրառվել ոգելից խմիչքներ արտադրող արդյունաբերության ճյուղերում և հուշանվերային արտադրությունում:

### Առաջարկի նկարագրությունը

Առաջարկվում է միջազգային արտոնագրային գրանցման հայտի ներկայացված ոգելից խմիչքների շՁերի փաթեթավորման արդյունաբերական նոր նմուշ՝ պատյան շՁի համար:

Պատյանը բաղկացած է գլանաձև տեսք ունեցող իրանից և բռնակից: Իրանը ամբողջապես կամ մասնակիորեն ծածկում է շՁի արտաքին մակերեսը, ամուր հպվում է շՁի մակերեսին, կամ շփումը շՁի մակերեսի և իրանի միջև կարող է լինել մինիմալ: Իրանը պատրաստված է կոշտ, մաքսիմալ խտության գործվածք ունեցող ամբողջական կտորից կամ մի քանի տարբեր կտորների առանձին մասերից, ինչը շՁի տեղափոխումը դարձնում է մաքսիմալ ապահով: Իրանի արտաքին ձևավորման համար օգտագործվում են հիմնականում մանածագործական նյութերով զանազան դեկորատիվ էլեմենտներ, ինչպես օրինակ՝ ասեղնագործական տարրեր, տարբեր լայնական հատույթով երիզահանգույցներ, կտորից, հյուսքաթելերից ժապավեններ, ինչպես նաև վիզուալ տեղեկատվության փոխանցման համար տարբեր թեմատիկ զարդանկարներ, զարդանախշեր և գրվածքներ:

Իրանի վերևի և ներքևի մասերը, ինչպես նաև աջ և ձախ կողերը երիզված են հյուսկեն թելերով կամ երիզահանգույցներով: Երկու կողերից զուգահեռաբար բարձրացող երիզներն անմիջականորեն միանում են նույն նյութից պատրաստված բռնակին: Կախված ընտրված մոդելից՝ վերևի հատվածի երիզը կարող է լինել կամ ոչ:

Որոշ մոդելներ կարող են ունենալ նաև կտորից բերանակալ, որը պատրաստվում է այն նույն հումքից, ինչ իրանը:

Բռնակը պատրաստվում է այն նույն երիզահանգույցներից կամ հյուսկեն թելերից, որոնք երիզում են իրանի աջ և ձախ կողերն ու վերևի և ներքևի մասերը: Երկու կողմերից զուգահեռ բարձրացող երիզահանգույցներն ու հյուսկեն թելերը ձևավորում են բռնակը: Բռնակի երկարությունը ֆիքսված չէ և կարող է լինել տարբեր՝ կախված ընտրված շի մոդելից:

Պատյանը նախատեսված է մեկ շի համար: Ըստ պատվերի կարող է պատրաստվել տարբեր չափերի և տարողության շերի համար:

## **Առաջարկի առավելությունները**

Շուկայում առկա նմանակներից առաջարկվող մոդելի հիմնական առավելությունը հյուսկեն թելերից կամ ժապավեններից պատրաստված բռնակն է: Այն ամուր է, երկար օգտագործելու պարագայում չի ընդարձակվում, ծանրության տակ չի դեֆորմացվում, հնարավորություն է տալիս շիշն ապահով պահել և անվտանգ տեղափոխել: Շի պատյանն ունի նաև դեկորատիվ նշանակություն և որպես հուշանվեր կարող է բավարարել որոշակի գեղագիտական պահանջմունքներ: Առաջարկվող պատյանը ապրանքին՝ այս դեպքում շիին, հաղորդում է էսթետիկ գրավչություն, բարձրացնում է սպառողական պահանջարկը և շուկայական արժեքը: Պատյանի պատրաստման համար օգտագործվող հումքը էկոլոգիապես մաքուր է: Պատյաններն ունեն բազմակի կիրառման հնարավորություն:

Ստորև նկարի տեսքով ներկայացվում են առաջարկվող շի պատյանի մի քանի նմուշներ:



